ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 60/6

16-ը հունիսի 2022 թվականի

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը հաստատելու մասին

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի

2022թ. հունիսի 16-ի նիստի թիվ 60/6 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն քաղաքականության նպատակն է՝ երաշխավորել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ կամ Մասնաճյուղ) ուսանողների և դասախոսների մասնակցությունը Մասնաճյուղի կառավարման գործընթացներում, հնարավորություն տալ նրանց մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը, մեծացնել ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կառավարման գործընթացներին իրենց մասնակցությունից:

1.2. Սույն քաղաքականության իրականացման խնդիրներն են.

1) հստակեցնել ուսանողների և դասախոսների մասնակցություն նախատեսող կառավարման կառույցների ցանկը,
2) մշակել կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների մասնակցությունն ապահովող կարգեր և ընթացակարգեր,
3) հստակեցնել կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների իրավասություններն ու պատասխանատվությունը,
4) ներդնել կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների իրազեկման և մասնակցության նախապատրաստման համակարգ,
5) ապահովել ուսանողների և դասախոսների մասնակցությունը կառավարման գործընթացներին,
6) մշտադիտարկել կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների մասնակցությունից բավարարվածության մակարդակը,
7) գնահատել կառավարման գործընթացներում ուսանողների և դասախոսների մասնակցության արդյունավետությունը,

8) կառավարման գործընթացներին ուսանողների և դասախոսների մասնակցությունից բավարարվածության արդյունքների հիման վրա բարելավել մասնակցության մեխանիզմները։

1.3. Քաղաքականության իրականացման արդյունքում ակնկալվում է, որ՝

1) բարձրանալու է կառավարման կառույցների գործունեության արդյունավետությունը,
2) արագանալու է որոշումների կատարման գործընթացը,
3) նվազելու են մասնաճյուղի ծախսերը դրանց կատարումը վերահսկելու համար,
4) ավելանալու է ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կառավարման գործընթացներին իրենց մասնակցությունից։

1.4. Սույն քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Մասնաճյուղի տնօրենը և Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի (այսուհետև՝ ՄԿՈԱ) վարիչը, իսկ դրանից բխող գործողությունների համար՝ կառավարման մարմինների և կառույցների ղեկավարները:

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ՊԵՏՔ Է ՆԱԽԱՏԵՍՎԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

2.1.ԵՊՀ ԻՄ-ի ներքին շահակիցների (ուսանողների և դասախոսների) ներգրավվածությունը կառավարման գործընթացներում, հիմնականում իրականացվելու է հետևյալ կառույցների աշխատանքներին ակտիվ մասնակցությամբ.

2.1.1. Կառավարման և խորհրդատվական մարմիններում՝

1) ԵՊՀ ԻՄ Գիտական խորհուրդ,
2) ԵՊՀ ԻՄ տնօրենություն,
3) Ֆակուլտետների գիտական խորհուրդներ,

2.1.2. այլ կառույցներում՝

1) Մասնաճյուղի որակի կառավարման մշտական հանձնաժողով,
2) Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի հանձնաժողով,
3) Էթիկայի հանձնաժողով։

2.2. Կառավարման կամ խորհրդատվական այլ կառույցների ձևավորման դեպքում՝ ներքին շահակիցների մասնակցությունը պետք է ապահովվի սույն քաղաքականության հիմնադրույթներին համապատասխան։

3.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՂ ԿԱՐԳԵՐԻՆ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Մասնաճյուղի կառավարման համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի ուսանողներին և դասախոսներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների քննարկմանն ու կայացմանը:

3.2. Մասնաճյուղի կառավարման մարմիններում և այլ կառույցներում ուսանողների և դասախոսների մասնակցությունը պետք է սահմանվի հստակ համամասնություններով՝ այդ կառույցների կանոնադրություններով և աշխատակարգերով:

3.3. Ընթացակարգերը պետք է պարունակեն ուսանողների և դասախոսների իրավասությունների հստակ սահմանումներ և գործառույթների իրականացման իրական լծակներ:

4. ԵՊՀ ԻՄ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

4.1. Մասնաճյուղի կառավարման մարմինների և կառույցների կանոնադրությունները, բոլոր կարգերը և աշխատակարգերը պետք է ապահովեն ուսանողների 25 տոկոս մասնակցություն այդ կառույցների կազմում, ինչպես սահմանված է Մասնաճյուղի գիտական և ֆակուլտետների խորհուրդների համար:

4.2. Տնօրենության կազմում ի պաշտոնե ընդգրկված պետք է լինի Մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահը:

4.3. Պայմաններ պետք է ստեղծվեն, որպեսզի ուսանողական կառույցների ներկայացուցիչները ազատորեն բարձրաձայնեն ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և ուսանողական տարբեր հանձնաժողովների աշխատանքների ընթացքում ուսանողների կողմից վերհանված կառավարման խնդիրները:

4.4. Ուսանողները կառավարման գործընթացին պաշտոնական անմիջական մասնակցությունից բացի, պետք է կարողանան անուղղակիորեն ազդել Մասնաճյուղի կառավարման մարմինների որոշումների վրա՝ տարբեր մեխանիզմներով արտահայտելով իրենց կարծիքները ներհամալսարանական գործընթացների վերաբերյալ, մասնավորապես, մասնակցելով Մասնաճյուղում պարբերաբար կազմակերպվող հարցումներին, հանդիպումներին և քննարկումներին մասնակցության միջոցով:

4.5. Կուրսի ավագների ինստիտուտը իր մասնակցությամբ կարող է նպաստել ուսանողների կարիքների վերհանմանը:

4.6. Կառավարչական որոշումների վերջնական տարբերակները ուսանողներին կամ նրանց ներկայացուցչական մարմիններին պետք է հասանելի լինեն Մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով կամ այլ եղանակներով:

5. ԵՊՀ ԻՄ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

5.1. Մասնաճյուղի կառավարման կառույցների կանոնադրությունները, կարգերը և աշխատակարգերը պետք է ապահովեն նաև դասախոսների 25 տոկոս մասնակցություն այդ կառույցների կազմում:

5.2. Պետք է գործեն մեխանիզմներ, որոնք Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմին հնարավորություն տան կառավարման ներկայացուցչական մարմինների որոշումների նախագծերի վերաբերյալ կարծիքներ ներկայացնել Գիտական խորհրդին՝ նախօրոք դրանք քննարկելով ֆակուլտետներում և ամբիոններում:

5.3. Բոլոր կառավարչական վերջնական որոշումների մասին Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է հնարավորություն ունենա տեղեկանալ Մասնաճյուղի պաշտոնական կայքից կամ այլ եղանակներով:

5.4. Ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար Մասնաճյուղում պարբերական հարցումներ են կազմակերպվում Մասնաճյուղի կառավարման համակարգի գործունեության արդյունավետության, իրենց աշխատանքային պայմաններից բավարարվածության գնահատման նպատակով, ակնկալելով օգտագործել ստացված արդյունքները Մասնաճյուղի գործունեության արդյունավետության բարձրացմանը նպաստելուն:

6.ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԾԱՆՈԹԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

6.1. Մասնաճյուղը պետք է ունենա գործող մեխանիզմներ, որոնց միջոցով կառավարման համակարգում ընդգրկված ուսանողները և դասախոսները կծանոթանան կառավարման գործընթացներին:

6.2. Մասնաճյուղի կառավարման կառուցվածքը և ստորաբաժանումների հստակ գործառույթները պետք է հասանելի լինեն ներքին և արտաքին շահակիցներին՝ Մասնաճյուղի կայքէջի միջոցով:

6.3. Ուսանողական կառույցների ղեկավարները և կառավարման կառույցներում ընդգրկված ուսանողները պետք է անցնեն վերապատրաստման դասընթացներ

համապատասխան կառույցներում իրականացվող աշխատանքներում իրենց իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ:

6.4. Իրենց իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ վերապատրաստումներ պետք է կազմակերպվեն նաև դասախոսական կազմի համար:

6.5. Վերապատրաստումների թեմաների և ձևերի ընտրության պատասխանատվությունը իրենց վրա պետք է վերցնեն համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները:

7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Մասնաճյուղը պարբերաբար պետք է ուսումնասիրի ուսանողների և դասախոսների բավարարվածությունը կառավարման գործընթացներին նրանց մասնակցությունից:

7.2. Պետք է գնահատվի, թե ինչ չափով են ուսանողները և դասախոսները բավարարված իրենց վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցելուց:

7.3. Բավարարվածության գնահատումը պետք է կատարվի անանուն հարցումների, ֆոկուս-խմբային քննարկումների և հետադարձ կապի այլ մեխանիզմների միջոցով:

7.4. Բավարարվածության ուսումնասիրությունների, արդյունքների վերլուծության և բարելավման առաջարկների ներկայացման համար պատասխանատու է Մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժինը:

8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

8.1. Մասնաճյուղի կառավարման և ներկայացուցչական մարմիններում ներքին շահակիցների՝ ուսանողների և դասախոսների հարցադրումներն ու առաջարկությունները պետք է նպաստեն Մասնաճյուղի կառավարման համակարգի բարելավմանն ուղղված հիմնավորված կառավարչական որոշումների կայացմանը, այդ թվում՝

1) Մասնաճյուղի կրթական, գիտական և այլ ծառայությունների որակի բարձրացմանը,
2) Մասնաճյուղի վարչական աշխատակազմի և ներքին շահակիցների միջև կապի և վստահության ամրապնդմանը,
3) Մասնաճյուղում որակի մշակույթի ձևավորմանը և զարգացմանը:

8.2. Մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինը պետք է ուսումնասիրի կառավարման գործընթացներում մասնակցությունից ուսանողների և դասախոսների բավարարվածության մակարդակի վրա բացասական ազդող գործոնները, դեպքերը և դրանց պատճառները՝ դրանց վերացման ուղղությամբ առաջարկներ մշակելու համար:

8.3. Անանուն հարցումների հարցաշարերում պետք է լինեն Մասնաճյուղի կառավարման համակարգի բարելավմանն ուղղված ուսանողների և դասախոսների դիտողությունների և առաջարկությունների ներկայացման հնարավորություն, իսկ դիտողություններն ու առաջարկությունները այնուհետև պետք է քննարկվեն ֆոկուս-խմբային հանդիպումների ընթացքում:

8.4. Մասնաճյուղի ՄԿՈԱ բաժինը այդ առաջարկությունները նույնպես պետք է մշակի, իրականացնի բենչմաքինգային վերլուծություն և ներկայացնի Որակի կառավարման մշտական հանձնաժողովի կամ Գիտական խորհրդի քննարկմանը:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն քաղաքականությունը հաստատում է ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհուրդը:

9.2. Սույն քաղաքականությունը գործում է հաստատման պահից:

9.3. Քաղաքականության մեջ փոփոխություններ ու լրացումներ կարող են կատարվել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի որոշմամբ՝

1) տնօրենի,
2) գիտական խորհրդի անդամների,
3) որակի կառավարման մշտական հանձնաժողովի առաջարկությամբ: